

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԸ

Ս. Մ. ԱՆԹՈՍՅԱՆ

Վերջին երկու տասնամյակներում հայ քերականական միտքն ընդունում է մեկ խոսքի մաս ևս՝ «եղանակավորող բառեր» անվանումով: Ինչպես գիտական ուսումնասիրությունների¹, այնպես էլ գործնական քերականությունների մեջ եղանակավորող բառերն առանձնացվում և արժեքավորվում են որպես ուրույն խոսքի մաս:

Բնականաբար, հարց է առաջանում. իսկ նախկինում ի՞նչ խոսքի մասի մեջ էին մտնում եղանակավորող բառերը: Մենք այստեղ նպատակ չունենք հարցի պատմության մասին խոսել, բայց նկատենք, որ դեռևս Մ. Արեղյանի առաջարկած այս խնդիրն աստիճանաբար ճանաչում գտավ, և այսօր այդ խոսքի մասը ուսումնական ձեռնարկներում, դպրոցական դասագրքերում մտցնելու աստիճան մշակված է ու հիմնավորված:

Միջին հայերենի չթեքվող խոսքի մասերի ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց այն ճշմարտության, որ այստեղ ևս կան բառեր ու բառակապակցություններ, որոնք չեն նույնանում ո՛չ մակբայների, ո՛չ ձայնարկությունների և ո՛չ էլ մյուս չթեքվող խոսքի մասերի հետ, այլ առանձին երևույթ են մեր լեզվի մեջ, ուստի մենք այդ բառերը քննում ենք որպես առանձին խոսքի մաս՝ «եղանակավորող բառեր» պայմանական անվանումով²: «Եղանակավորող բառեր» անվանումն, անշուշտ, ինչ-որ չափով խոսում է այդ բառերի բառական-իմաստային և քերականական կիրառության մասին. «Եղանակավորող բառերն արտահայտում են խոսողի մտածական վերաբերմունքը, որով եղանակավորում կամ երանգավորում են նախադասությունը, նրա որևէ անդամը»³:

Նկատենք, որ եղանակավորող բառերը չեն նույնանում ձայնարկությունների հետ, քանի որ վերջիններս հիմնականում զգացական և կամային վերաբերմունք են արտահայտում, իսկ եղանակավորող բառերը՝ մտածական, դատողական վերաբերմունք: Մյուս կողմից՝ հայտնի է, որ ձայնարկություններն առավել չափով՝ հատուկ առոգանությամբ արտասանվող ձայնավոր հնչյուններ են, երբեմն նաև մեկ կամ երկու բաղաձայնի կցումով, մինչդեռ եղանակավորող բառերը գրեթե առանց բացառության բառական-քերականական այլևայլ կազմություններ են, միայն թե ներկայումս այդ կազմություններն իրենց նյութական իմաստը կորցրել են:

Այսպես, օրինակ՝ «Իսկ ես կոչեցի զերիցունս եկեղեց[ւոյն] Տիսփոնի քաղաքի և կառնեցի թէ նոքա նենգությամբ ինչ ետուն նմա զերդումն եւ ետուն

¹ Տե՛ս Ս. Գ. Արբա համայան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965: Ա. Ա. Արբա համայան, Գրարարի ձեռնարկ, Երևան, 1958:

² Մ. Արեղյանը «Հայոց լեզվի տեսության» մեջ անվանում է՝ «եղանակական բառեր կամ մասնիկներ» (էջ 132):

³ Տե՛ս Ս. Գ. Արբա համայան, նշվ. աշխ., էջ 507:

ինձ ստեղծ» (Փ Քյուզանդ) և «Կարծեմ թէ նազարն նաչաղ է» (Ն. Հովնաթան) նախադասություններում «կարծեմ» բայի երկու տարբեր ժամանակներ են օգտագործված, սակայն գրաբար նախադասության մեջ բայն իր նյութական արժեքով է, մինչդեռ երկրորդ օրինակում՝ իր նյութական արժեքից հեռացած: Եվ կամ՝

«Թող մէկ համբուրեմ, զալում»

«Թող Յովնաթան մէկ տաղ ասէ քո թասին» (Ն. Հովնաթան):

Այդ անցումն ավելի շոշափելի է այս օրինակում: Հեղինակն, անշուշտ, քող բառն իր նյութական իմաստով չի օգտագործել, այլ որպես եղանակավորող բառ, սակայն բավական է քող բառը շեշտված արտասանել և այնուհետև փոքր-ինչ դադար տալ, ապա կունենանք նյութական իմաստով բառ:

Եղանակավորող բառերն առավելապես առնչակցվում են մակբայների հետ և անցյալում մեծ մասամբ մտել են այդ խոսքի մասի մեջ, չնայած որ նրանց միջև կա շարահյուսական որոշակի տարբերություն: Մակբայները գերազանցապես ստորոգյալի պարագա լրացումներ են լինում՝ կախված իրենց տեսակից, մինչդեռ եղանակավորող բառերը, զրկված լինելով նյութական իմաստից, նախադասության անդամ չեն դառնում, այլ պարզապես խոսողը դրանով իր վերաբերմունքն է արտահայտում իրողության նկատմամբ: Ահա ինչու, մակբայները դրվում են հատկանիշ արտահայտող բառերի վրա, մինչդեռ եղանակավորող բառերը դրվում են ինչպես նախադասությունների ու բառակապակցությունների, այնպես էլ ամենայն բառի վրա: Այսպես, օրինակ՝

«Տանին գերեզման դրնեն եւ հողով իւր աչքըն լըցուի.

Ապա փոշիմանի՝ և ասէ թէ՝ հերիք է՝ և այլ չի պիտի

(Կ. Երզնկացի):

«Այլ ստեղծ յուշնէ զօրութեամբ ինքեան.

Նախ զերկինս երկնայնօք, յոյժ վայելչական.

Ապա զորս ի նիւթոյ շորից տարրական (Մ. Ղրիմեցի):

Վերոհիշյալ նախադասությունների մեջ ապա և նախ բառերը ժամանակի մակբայներ են և ստորոգյալի լրացում: Նախ... ապա զուգադրությունը կասկած չի թողնում, որ մենք մակբայի հետ գործ ունենք, իսկ ինչ վերաբերում է ապա բառի՝ առաջին նախադասության մեջ անկախ կիրառությանը, ապա այն իմաստով համարժեք է հետո մակբային:

Մինչդեռ «...ապալ ով ելանէ ի հովանոյ նորա՝ ի պատուիրանցն եւ գործէ մեղս և անզեղչ մնայ, սատանայ՝ աւձն հարեալ սպանցէ զնայ եւ կորընչի» (Վ. Այգեկցի) նախադասության մեջ ապա բառը մակբայ չէ, քանի որ շեշտված կերպով ժամանակ չի արտահայտում:

Զիշտ է, որ եղանակավորող բառերն առավելապես աղերսակցվում են նախ մակբայների, ապա և ձայնարկությունների հետ, սակայն որպես երբևէ նյութական արժեք ունեցող բառաձևից առաջացած ձևեր, նրանք կարող են աղերսակցվել այլևայլ խոսքի մասերի պատկանող բառերի հետ: Այսպես, գրաբարյան իսկ գոյականի (որ մեր հին լեզվում նշանակում էր «բուն գոյացություն») շաղկապական կիրառությունները հայտնի են, սակայն իսկ բառը ոչ պակաս չափով օգտագործվում է նաև որպես եղանակավորող բառ, ինչպես՝ «նախ մա իսկ վայել է իմաստության դուռն ու խելաց» (Կ. Երզնկացի):

Անկասկած, իսկ բառից է ձևավորվել իսկի եղանակավորող բառը, որը, կարծես, միջին հայերենով խոսք ձևավորելու համար կենսականորեն անհրաժեշտ է, այն հանդիպում է շատ անգամներ:

Եղանակավորող բառերն աղերսակցվում են նաև դերանունների հետ. այսպես՝ հաճ, հեճ միջին հայերենում ցուցական դերանուններ են: Օրինակ՝ «հաճ աման լինի որ բերանն նեղ լինի» (Ա. Ամասիացի). «Եւ ասաց այրն այն, թէ գիտէի, որ դուք հաճ գեղեցիկ էիք» (Վ. Այգեկցի). մինչդեռ այդ բառերը միջին հայերենում հանդես են գալիս նաև որպես եղանակավորող բառեր, ինչպես՝ «եկի առ հաճ կրակի» (Կ. Երզնկացի): Հաճ եղանակավորող բառն առավել շատ օգտագործված ենք գտնում ու բառի բաղադրությամբ, ինչպես՝ թէ ք դրամ տրորես եւ խմցես՝ զփայծաղն հալէ... եւ թէ ջրով տրորես... դերկնուն բերանն բանայ, հաճոք (այնպես որ) արուն լուծէ» (Ա. Ամասիացի): Եվ կամ՝ «Աշկարն արար դիզան դիզան, Հաճ ու (ինչպես, այնպես որ) արին դետեր ելան» (Հ. Թլկուրանցի):

Եղանակավորող բառերն աղերսակցվում են նաև թվականների հետ. այսպես՝

«Մէկ մարդ մի ճուհար ունէր՝ ի խելաց շահել չըկարաց» (Հ. Երզնկացի):

«Թող էդ բազէն մէկ վարդ կտրեմ, դու էլ պինդ պահէ» (Ն. Հովնաթան):

Վերևի կիրառություններում մէկ, մի թվականներ են, մինչդեռ ստորև բերված օրինակներում նրանք այլևս իրենց նյութական իմաստը կորցրել են, չեն նշանակում հատկապես մի, մէկ. ինչպես՝

«Պարի եկ մին ինձ մօտ՝ դու մուրվաթ արայ, է՞ր ես ինձնէ հեռանալիս»
(Ն. Հովնաթան):

«Մեռնիս դու՝ ի հող մըտնիս, մէկ ասա, թէ ո՞ւր կու գնաս»
(Հ. Երզնկացի) և այլն:

Եղանակավորող բառերի՝ կապերի հետ աղերսակցվելու դեպքեր նույնպես կան. լավ օրինակ է իբրեւ եղանակավորող բառը, որտեղ և շաղկապը փոխարինված է հոմանիշ ու շաղկապով. «Ասեն խանին, պարոն եղև քեզ սատան

«Նույնպէս և պարոնին պատրողական բան

«Իբրեւ (—իրրև թե) փեսայն լինել նորա դաւաճան (Մ. Ղրիմեցի):

Միջին հայերենում թեև քիչ չափով, բայց կան նաև գոյականներից ու ածականներից առաջացած եղանակավորող բառեր, ինչպես՝ «Եւ զինքն ի շուրն դնես զշուրն յինքն քաշէ, եւ զկապանին իրմով կու աւծեն եւ կու կոկեն. եւ շատն (=առավելապես) ի Սարակինոսացն եւ այլազգացն զլուխ ածիլողնին ի բան կու անցանեն ի մեր յերկիրն» (Ա. Ամասիացի). «Շիտակ (=ուղղակի) մեռնելէ պրծանք ինչ հալով» (Ն. Հովնաթան):

Առաջանալով նյութական բովանդակությունից զրկված այլևայլ խոսքի մասերից ու խոսքային կապակցություններից, ի տարբերություն մակբայների, որոնք կարող են դրվել միայն հատկանիշ արտահայտող բառերի վրա՝ իրենց հերթին հատկանիշ արտահայտելու համար, եղանակավորող բառերը կարող են գրվել փնչպես նախադասությունների, այնպես էլ նախադասության մի մասի, որևէ բառակապակցության կամ առանձին մեկ բառի վրա (գոյական, բայ, դերանուն և այլն): Բառահարաբերության մեջ չեն մտնում վերջիններիս հետ, այլ՝ պարզապես արտահայտում են խոսողի վերաբերմունքը, մտածումը:

Այսպես՝ 1) «...Եւ ահա իրօրի (<իրաւի) աղուէսն խեռ է և իմաստուն կենդանի» (Վ. Այգեկցի)։

2) Գիտե՞ս մարմին հմբ մսեղի. Գէմ արձան շեմք ինչ պղընձի» (Ֆրիկ)։

3) «Ամ, երբ հանց ընկեր քո բախտն. Ու թալեհն, ամ, ի՛նչ կայ հարկիք» (Ֆրիկ)։

4) «Կարծեմ թ՛իսկի չէ մեռունած, Կամ թէ լոկ ձիթով է օծած» (Մ. Ղրիմեցի) և այլն։

Այս օրինակներից առաջին երեքում իրաւի, գէմ, ամ եղանակավորող բառերը դրված են նախադասության վրա, իսկ չորրորդ օրինակում լոկ բառը դրված է ձիթով գոյականի վրա։

Եզրակացնենք. միջին հայերենում կա մի խոսքի մաս, որի մեջ մտնող բառերը չեն նույնանում ո՛չ մակբայների ու ձայնարկությունների, ո՛չ էլ մյուս խոսքի մասերին պատկանող բառերի հետ։ Քանի որ ընդհանրապես շթեքվող խոսքի մասերն առավել չափով առաջացել են նյութական բովանդակություն ունեցող բառերից, ուստի եղանակավորող բառերը բացառություն չէին կարող կազմել։ Անշուշտ, եղանակավորող բառերի մեջ կան առանձին բառեր, որոնց խոսքի մասաչին պատկանելությունը որոշելը դեռևս դժվար է, սակայն ընդհանուր առմամբ պետք է նկատել, որ եղանակավորող բառերը հնչյունական նույն կազմի մեջ բոլորովին տարբեր իմաստ ու քերականական երևույթ են արտահայտում, ուստի և ըստ իրենց արտահայտած իմաստի և քերականական կիրառության պետք է տարբերվեն նույն հնչյունական կազմով արտահայտված այլ իմաստ ու կիրառություն ունեցող բառերից։ Մեկ անգամ երբ նյութական կամ բառական իմաստ ունեցող բառերը, զրկվելով իրենց նախնական իմաստից, դառնում են եղանակավորող բառեր, այնուհետև հնչյունական նույն կազմի մեջ նրանք համատեղում են երկու իմաստ, ուստի և երկու տարբեր քերականական կիրառություններ և ըստ հարկի օգտագործվում են այս ու այն փմաստով ու քերականական կիրառությամբ։

Ըստ կազմության եղանակավորող բառերը լինում են պարզ, ածանցավոր, քերականական ձևերից առաջացած, բարդ և նկարագրական։

ա) Պարզ եղանակավորող բառեր.—մէկ, միւն, լոկ (լուկ, լօք), թող, իսկ (իսկի), հանց (հենց), ահա՛, հօսկայ, ամ, ադ, գէմ, հետ, ապա, մանաւանդ, ո՛չ, նախ, նա, թերևս, ամէն, հաւասար, խո (խօ, խոյ), հասարակ, հա՛, շիտակ, ստուգ, այո՛, շատն և այլն։

Պարզ եղանակավորող բառերի շարքը պետք է դասվեն նաև փոխառյալ եղանակավորող բառերը՝ ահապ, ախիւր, բալֆի (բալթիւմ, բալթամ), հալա, պարի, դէյի, ֆեշկէ սերանիս։

բ) Ածանցավոր եղանակավորող բառեր.—նմանապէս, անպատեհ, անհրեար, անկասկած, առհասարակ։

գ) Քերականական ձևերից առաջացած.—իրաւ (իրաւի, յիրաւի), կարծեմ, չիմի։

դ) Բարդ և նկարագրական եղանակավորող բառեր.—մի՞թե, միայն, որպէս, նոյնպէս որ, մէկ մի, հանց որ (հանցաւոր որ), որպէս և, նոյնպէս և, այսպէս և, մէկ էլ, այնպէս որ, ապա թէ ոչ, թէ ոչ, թէ չէ, թէ չէ նա, միայն թէ, ապա թէ (հապա թէ), ոնց որ, տէր ով է, որչափ ևս առաւել, ի վերայ այս ամենայնի, աստուած կու սիրէ՛ք, արեւոյ համար, հաշուէ թէ, հաշուեմք թէ, գրէթէ. լիմի թէ, չիմի թէ, թող թէ, կարծեմ թէ, ասես թէ և այլն։

1) Պարզ եղանակավորող բառեր.—Սրանք միևնույն ծագումն ու կիրառությունը չունեն։ Դրանց մեջ կան այսպես կոչված՝ բուն եղանակավորող բառեր, որոնք միջին հայերենում միմիայն որպես եղանակավորող բառ են օգտագործվում։ Դրանք են՝ լռել (լուկ, լօք), ահա՛, հօսկայ, ամ, գէւ, ո՛չ, նա, քեզես, ամէն, խո (խօ, խոյ), հա՛, այո՛։ Անկասկած, սրանց հետ պետք է գնել նաև փոխառյալ եղանակավորող բառերը՝ ահսու, աիւիւ, բալբի (բալբիմ, բալբամ), հալա, պարի, դէյի, քէշէ։

Այժմ քննենք բուն եղանակավորող բառերն ու նրանց կիրառությունները։
 Լռել.—գրաբարում այս բառն առավելապես ածականական կիրառություն ունի։ Ինչպես՝ «Երկիր պագանէին նմա ոչ իբրև մարդոյ լռելոյ, այլ իբրև Աստուծոյ ճշմարտի» (Անոր Հայկազյան բառարան), թեպետ պատահում է եղանակավորող բառի իմաստով ևս, ինչպես՝ «Լռել մնաց գերեզմանն, յորում յառաջագոյն տեսին զնա եղեալ» (նույն տեղում)։ Միջին հայերենում լռել միայն եղանակավորող բառի իմաստով է օգտագործվում, ինչպես՝ «Ութերորդ դասք են, որ ասեն իրենց դեկանիոն. և են դոքա աղեղնաւորք և ուննան դուպլ վարոցս փ ձեռվին և լռել տապար» (Ս. Գունդստապլ)։

Առանձին հեղինակների մոտ լռել եղանակավորող բառը հանդես է գալիս նաև հնչյունափոխված լուկ և լօք ձևերով. ինչպես՝ «...նույնպէս որ բանի տընտես լուկ խայթոց ունի զինչ մեղու» (Հ. Երզնկացի)։ «...Լռել շրջիս զօրըն դու մոլոր» (Ֆրիկ)։ «Առանց ջուր՝ ձուկն չի ապրիլ, լօք ջրին կտրողն անիծած», «Սիրու հաւն փ ձայն էած, լօք լսեց սրտիկս ու դողաց» (Ն. Քուչակ)։

Հովհաննես Երզնկացու մոտ գտնում ենք հօսկայ եղանակավորող բառը։ Ահա այդ օրինակը. «Հօսկայ մերկ եմ ես հիմայ»։ Հենց այն հանգամանքը, որ տարբեր գրչություններում հօսկայ բառը փոխարինված է «ահա՛ւասիկ», «ահա՛» բառերով, վկայում է այն մասին, որ դա եղանակավորող բառ է։ Հօսկայ բառը վկայված չէ ոչ Հայկազյանում և ոչ էլ Ստ. Մալխասյանցի մոտ ու Հ. Աճառյանի Արմատական ու Գավառական բառարաններում։

Ամ.—միջին հայերենով գրող գրեթե բոլոր հեղինակներն օգտագործում են այս եղանակավորող բառը։ Զարմանալի է, որ Հ. Աճառյանը ո՛չ Արմատականում և ոչ էլ մանավանդ Գավառականում չի նշում այս բառը։ Ս. Ամատունին նույնպես չունի։ Ստ. Մալխասյանցը բացատրականում բերում է օրինակներ կեղծ Շ. Բագրատունուց և կարծում է, թե «գուցէ պատուադրութիւն (է) այժմ բառի»⁴։ Ամ եղանակավորող բառն, ըստ երևութիւն, այժմ մակբայից կամ ամա յայնց շաղկապից է առաջացել։ Սրինակ՝ «Ամ, ո՞վ ասաց ձեզ, թէ մերկ էք։ Կամ ո՞վ խաբեաց զձեզ, պատմեցէք» (Հ. Երզնկացի)։ «Ամ, երեսդ է՞ր է դեղնել և երեսիդ գունն գնացեր»։ «Խօ՛շ եար, ամ, զդուռն բաց, ձիւն եկեր՝ ոտվիս կու մըսի» (Ն. Քուչակ)։

Գէւ.—Հ. Աճառյանի Գավառականում բառս չենք գտնում։ Ս. Ամատունին «Հայոց բառ ու բանում» վկայում է գէւ բառը⁵ հղելով աճեռգ բառին։ Ստ. Մալխասյանցը նույնպես Բացատրականում կէւ բառը ղնում է որպես բարբառային և հղում է անհոգ բառի 1-ին իմաստին, այն է՝ «հոգսերից ազատ, անկասկած, ապահով, անխռով»։

⁴ Տե՛ս «Հայերէն բացատրական բառարան», հ. 1, էջ 54։

⁵ Միջին հայերենի բաղաձայնական համակարգին համապատասխան կէւ կարդալու համար պետք էր գէւ գրել։

Միջին հայերենում գէւմ բառն օգտագործվում է առավելապես հաստատական եղանակավորող բառի իմաստով, ինչպես՝

«Շատ մարդ հասրաթով գէւմ կան ի ներքև հողին պառկած»:

«Գէւմ զայս վստահի գիտէք, որ այս կեանքըս մեզ չի մընալ» (Ֆրիկ):

«Իմ հարն ինձի հիւր եկեր, գէւմ հազար տարու՝ թէ գիտես»

(Ն. Քուլակ):

Խոս (խոյ, խօ).— Զ. Աճառյանը ճշտորեն գտնում է, որ խոս (<խոմ) եղանակավորող բառը սկզբում հարցականի մասնիկն է⁶: Այդ առավել ևս ապացուցվում է միջին հայերենում նրա կիրառությամբ: Խոս եղանակավորող բառն օգտագործված ենք գտնում միմիայն Նաղաշ Հովնաթանի ստեղծագործություններում: Նաղաշ Հովնաթանը Շոռոթ գյուղից էր և իր ստեղծագործություններում ու ոճով սերտորեն կապված էր Ագուլիսի ու Քիֆլիսի բարրառախոս միջավայրի հետ: Այնպես որ, բառս դժվար թե որևէ այլ ծագում և ստուգաբանություն ունենա⁷: Օրինակ՝ «Ես սեֆիլ բազպանի նման խոյ⁸ մեռայ քեզ աղաշելով»:

«Ես խոյ քեզից չեմ ուզելու ապրանք, մալ» (Ն. Հովնաթան):

Բառս առավել շատ հանդիպում է խօ ձևով. ինչպես՝ «Կոտորվիլ խօ չէր քո նուռն»: «Երկիջակ խօ շատ կայ թասթիր»:

Նա(յ).— Միջին հայերենում չափազանց շատ գործածական է նա եղանակավորող բառը. ինչպես՝ «Տամիլ, որ է մորթ եւ միս բուսուցանող, եւ մորթ բուսուցանող այն դեղն է որ խոցին միսն թուլ լինի նա, պինդ առնէ եւ մորթ բուսուցանէ». «Եւ յորժամ ես զայս տեսայ, եւ ուզեցի որ գիտնամ... հարցայ նա, զիս ծաղր արին» (Ա. Ամասիացի). ապա և՝ «Թէ Քրիստոսի աշակերտ ես նայ, դու լսէ զինչ քարոզես» (Մ. Ղրիմեցի):

Նա եղանակավորող բառը հաճախ հանդես է գալիս նե՛ ձևով, ինչպես՝

«Թէ իմն ես նե՛ վար արի, թէ օտար ծաղիկ նա, գնա»

«Երթամ սղաշեմ... երբ եկիր նե՛ ալ շերթաս» (Ն. Քուլակ):

Արդ, ինչ բառ է սա⁹, և ինչ աղբյուրակցություն ունի նա դերանվան և գրաբարյան նա (=և) շաղկապի հետ: Ինչպես վկայում է պրոֆ. Զ. Աճառյանը, նա բնիկ հայ բառ է և պատկանում է հնիւ. ոօ աայն դերանվանական արմատին¹⁰:

Հայկազյան բառարանը, ճիշտ է, չգնահատելով որպես եղանակավորող բառ, տալիս է նա բառի՝ եղանակավորող իմաստով կիրառության գեղեցիկ օրինակներ, ինչպես՝ «Նա բնաւ և ո՛վ իսկ կարէ պատմել», «Իսկ նա՛ արդ ոչ

6 Զ. Աճառյան, Գավառական բառարան, էջ 481:

7 Բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Աբրահամյանը, կասկածի տակ առնելով Զ. Աճառյանի բացատրությունը, գրում է. «Որքան էլ այդ բառը (խոմ—Ս. Ա.) նման է վրացերենի համապատասխան բառին, այնուամենայնիվ ոչ վաղ շրջանի եղանակավորող բառի այդպիսի փոխառությունը հազիվ թե այդքան լայն տարածում գտներ հայերենի համարյա բոլոր բարբառներում, որքան այդ բառը: Այնպես որ այդ բառի չափ լայն տարածված լինելը հայոց լեզվի մեջ կասկածի տակ է առնում հիշյալ բացատրությունը (տե՛ս «Զեքիլոդ խոսքի մասերը», 1965, էջ 509):»

8 Ուսանավորից հետո յ կիսաձայնի ավելացումն, ըստ երևույթին, կատարված է գրաբարի ուղղագրության հետևողությամբ:

9 Հայկազյան բառարանի հեղինակների բացատրությունից այնպես է հասկացվում, որ կարծես թե, նա եղանակավորող բառը նախա բառի կրճատումից է առաջացած (տե՛ս հ. Զ-րդ, էջ 383):

10 Տե՛ս «Արմատական բառարան», հ. 5, էջ 6:

իւրեանց ակնունէին թագաւորելոյ, այլ այլում օտար ազգի: Հայտնի է, որ նա բառը միջին հայերենում «և» միավորիչ շաղկապի կիրառութիւնն ունեն, ինչպես՝ «Որ ասես մի՛ սպանաներ, մի՛ գողանար և մի՛ շնար, նալ (=և) սպանանես, շնաս, դրկես, և մնացիր շարեաց զաւակ» (Հ. Թլկուրանցի): Վերևում արդեն ցույց տվեցինք, որ եղանակավորող բառերն աղերսակցվում են շաղկապների հետ, այնպես որ նա, նէ եղանակավորող բառերը նույն նա շաղկապի նորմաստ կիրառութիւններն են: Իրավացի է պրոֆ. Հ. Աճառյանը, երբ, ընկնելով նա բառի շաղկապական կիրառութիւնը միջին հայերենում, միտքը վարձացնում է հետևյալ կերպ. «Սրանից է յառաջացել թէականի նշանակութիւնը, որ միջին հայերենում երկրորդական նախադասութեան սկիզբն էր դրում, իսկ նոր գաւառականների մէջ դարձել է թէականին վերջադաս նէ, նը, նա. ինչ. թէ անհոգ կենայ տէր ծառոյն, նա շորանայ ծառն»¹²:

Եղանակավորող նշված բառերից բացի, միջին հայերենում կան բառեր, որոնք մեր լեզվի նախորդ շրջանում ևս հայտնի կիրառութիւններ են ունեցել, ինչպես՝ քերես: Օրինակ՝ «Առիւծն հիւանդացաւ և ուղարկեաց բժշկաց խնդիր. քերես արասցեն դեղ ցաւոյն» (Վ. Այգեկցի). «Ի շար նախանձ վարեաց զազգն.. քերես յափշտակէ զծառայն...» (Հ. Թլկուրանցի):

Արժեք բերել քերես եղանակավորող բառի գրաբարյան կիրառութեան օրինակներ. «...եւ գայր զճանապարհս իւր քերես յաւազակութենէ» (Փ. Բլուզանդ): «Զհտգար ամ յաշտ արար զի քերես որդի մի լինիցի նմա» (Եզնիկ) և այլն:

Այո՛, ո՛չ, չէ՛ նույնպես եղանակավորող բառեր են. ինչպես՝ «կոչեցին աղուէսն և ասեն. արայ հնար և բեր էշ մի. ասէ՛ այո՛յն». «Եւ ասեն ծնողքն նոցա ցնոսայ. լսէք զայն ձայնն. եւ նոքայ ասեն. այոյ» (Վ. Այգեկցի): Այո պատասխանական բառին համանիշ է նա՛ եղանակավորող բառը, ինչպես՝ «Քաղցրախօս դուդի ու զումրս, Հա բաս փուշացրիր ումրս» (Ն. Հովնաթան):

Միջին հայերենում լայն կիրառութիւն ունի անա՛ ցուցական եղանակավորող բառը, ինչպես՝ «Եւ ել համբաւ նորա ի բազում տեղիս, թէ գայ անա՛յ նոր զարմանալի գազան մի»: «Եւ անա՛յ շիւղ ինչ կար ի մորուս նորա» (Վ. Այգեկցի). ապա և՛ «Անա՛ հոտըն գար գարնան» (Հ. Երզնկացի). «Ահա եղև պայծառ գարուն» (Հ. Թլկուրանցի):

Միջին հայերենով գրող որոշ հեղինակներ (Ֆրիկ, Քուչակ, Ն. Հովնաթան) գործածում են նաև փոխառյալ եղանակավորող բառեր: Դրանք են.

ա) Բալֆի (բալքիմ, բալքամ)—երկբայական եղանակավորող բառ է, որ իմաստով համապատասխանում է հայերեն քերես, զուցե բառերին, ինչպես՝ «Երթամ, աղաչեմ, բալֆի (=թերևս) ըռահմ անի, դուռն բանայ». «Բալֆի տեսնեմ, ուրախանամ, էր ես թողնում՝ կարօտ մնամ» (Ն. Հովնաթան):

բ) Անապ աբդոյոք, տեսնես—սա՛ նույնպես երկբայական եղանակավորող բառ է, ինչպես՝ «Քոծոցն բաղչայ նռան, խնծորի. Պինդ կու պահես, աջաբ, էդ ո՛ւմ համար այ» (Ն. Հովնաթան). «Ա՛յ քարեր, ա՛յ թփեր, անապ ի ձեզ չէ՛ եկել» (Ն. Քուչակ):

Հաճախ հանդես է գալիս ամ եղանակավորող բառի հարադրութեամբ, ինչպես՝ «Անապ ամ, յէ՛ր կու դատիս, Աշխարհիս երակ դու Ֆրիկ» (Ֆրիկ):

¹¹ «Նոր Հայկազյան բառարան», հ. 2, էջ 383:

¹² Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 5, էջ 6:

գ, Պարի «գոնե, գեթ» — զիջական կամ սահմանափակման եղանակավորող բառ է: Օգտագործված ենք գտնում ն. Հովնաթանի մոտ՝ «Պարի (=գոնե, գեթ) եկ մին ինձ մօտ՝ գու մուրվաթ արալ»...

դ) Հալա «դեռ, դեռ որ» — հայերենի բարբառներում տարածված հայտնի բառն է: Օրինակը գտնում ենք ն. Հովնաթանի մոտ՝ «...Դու հալա դիր դոցա մաշին»:

ե) Քեշկե¹³ «երանի» — բաղձանքի եղանակավորող բառ է, որ գտնում ենք Քուչակի մոտ՝ «Այս մութն ու խաւար տարիս, քեշկէ չէր բերեր մայրս դիս»:

2) Ածանցավոր եղանակավորող բառեր. — Քանի որ եղանակավորող բառերը տարբեր խոսքի մասերից են առաջացել, ուստի ածանցավոր եղանակավորող բառերը չեն կազմվում այս կամ այն եղանակավորող բառի վրա ածանցի ավելացումով: Ածանցավոր եղանակավորող բառերն իրենց հերթին այլ խոսքի մասերի պատկանող պատրաստի կազմություններ են, առավելապես ածանցավոր մակբայներից առաջացած, ուստի և ըստ կիրառության ու ընկալման դրանք կարող են դիտվել և՛ որպես մակբայներ, և՛ որպես եղանակավորող բառեր: Ածանցավոր եղանակավորող բառերը թվով քիչ են՝ անպատճառ, անհնար, անկասկած: Կարծում ենք, որ վերոհիշյալ բառերը ստորև բերվող օրինակներում օգտագործված են, որպես եղանակավորող բառեր. «Ապա թէ թագուր չլինի ի հետ ու իշխան յիշխէ իր երկիրն դիպածն, նա ոսկին թագուրին է անհնար» (Ս. Գունդստապլ). «Յորժամ ի մէճլիս նստի, անկասկած սրտիկն արունի» (Մ. Նաղաշ). «Առ ի միտ օրինակ զդարձնի փութսն, որ երբ ի յինքն քաշէ զքնիկ տաք օդն անպատճառ տաքնայ փութսն ի յայն տաք օդոյն» (Մ. Հերացի):

3) Քերականական ձևերից առաջացած եղանակավորող բառեր. — Միջին հայերենում, թեև քիչ, բայց կան նաև քերականական ձևերից առաջացած եղանակավորող բառեր, ինչպես՝ իրաւ, իրօի (<իրաւի, յիրաւի), կարծեմ, չլինի: Խոնարհված ձևերից առաջացած եղանակավորող բառերն, անշուշտ, շատ շատ են, բայց քանի որ թէ, եթէ (հաշուէ թէ, թող թէ և այլն) շաղկապների հարադրությամբ են հանդես գալիս, ուստի դրանք իրենց տեղում են քննվելու:

Օրինակ՝ «Եւ ահա իրօի աղուէսն խեռ է և ճիմաստուն կենդանի...» (Վ. Այգեկցի). «Չասես, թէ դու մարդ ծընար, Յիրաւի ի յէշ նմանիս»։ «Յրիկ, քեզ խրատ մի տամ. է՛ իրաւ, թէ ինձ կու լսես» (Յրիկ). «...էր հոգի ստեղծել՝ ի հողոյ մարմին կապել է. Կարծեմ վասն այնոր արար, թէ ի վեր քարշել զնա կարէ» (Հ. Երզնկացի). «Պինդ լցէք տօլուի թասն, Չլնի՛ մարդոյ տաք վնասն» (Ն. Հովնաթան) և այլն:

4) Բարդությամբ կազմված եղանակավորող բառեր. — Բարդ եղանակավորող բառերը չինում են ինչպես կցական, այնպես էլ հարադրական կազմությամբ: Կցական բարդությամբ կազմվածներն են մի՞թէ, միայն:

Մի՞թէ — Երկբայական եղանակավորող բառ է՝ հաճախ հարցական երանգով. ինչպես՝ «Սքանչելատեսիլ դիմօք Միքայել հրեշտակն ես մի՞թէ» (Գ. Աղ-թամարցի). «Մի՞թէ մայրըն չերես զիս...» (Յրիկ) և այլն:

Բառս գրաբարյան կազմություն ունի՝ մի + թէ, ինչպես որ մեր հին լեզվում ևս բազում կիրառություններ ունեն. ինչպես՝ «Մի՞թէ և զարալիզէն ևս ոք կարիցէ ասել՝ թէ և զայն ուրուք տեսեալ իցէ» (Եզնիկ):

¹³ Ըստ կիրառության կարող է ընկալվել նաև որպես ձայնարկություն:

Միայն—սահմանափակման եղանակավորող բառ է՝ կազմված մի + այն բաղադրիչներից։ Մեր հին լեզվում ևս օգտագործվել է եղանակավորող բառի իմաստով. ինչպես՝ «...Որպէս որ բասիլիսկոսն կոչի ազգ ինչ օձից՝ հայելով միայն սատակէ զմարդ կամ զանազուն» (Եզնիկ)։ Միջին հայերենում սա շատ գործածական բառ է, այն գտնում ենք բոլոր հեղինակների մոտ. ինչպես «նոյնպէս հայր և որդի և հոգին բխեալ, Որ անձամբ և դիմօք միայն բաժանեալ» (Հ. Երզնկացի)։ «Դու շես միայն այս ցաւի տէր, Ամէն անդարձ այդպէս կուլայ» (Յրիկ)։ «Արաբացի դայլ նմանիս, Զձե քահանի միայն ունիս» (Մ. Ղրիմեցի) և այլն։

Հարադրական կազմությամբ եղանակավորող բառերն առավելապես կազմվում են ցուցական բառերի վրա և, որ շաղկապների ավելացումով, ինչպես՝ հանց որ, հանցգում որ, նոյնպէս որ, այնպէս որ, որպէս և, նոյնպէս և, այսպէս և և այլն։ Հանց որ, հանցգում որ առաջացել են հանց, հանցգում ցուցական բառերի վրա որ թարմատար շաղկապի ավելացումով։ Իմաստով համապատասխանում է արդի հայերենի՝ այնպէս որ եղանակավորող բառին. ինչպես՝ «...Հանց իմացիր որ ԻԱ մասն հետ ԻԴ մասին՝ Գ մասն յաւելի եղաւ, հանց որ յառաջն ասացաք»։ «Եւ թէ ուտեն շատ քուն բերէ, հանց որ զսղայութիւնն խափանէ»։ «այլ սուրն եւ աղին՝ ի տաքութիւն ընկերք են, եւ ի նրբութիւն եւ ի լերկութիւն՝ ներհակ են, հանցգում որ քաղցրն եւ լեղին ընկերք են...» (Ա. Ամասիացի)։

Նշված կիրառությունները ցույց են տալիս, որ հանց որ, հանցգում որ ստացվելու են սաստկական եղանակավորող բառեր են՝ հաստատականի որոշ հրահանգով։ Իրենց արտահայտած իմաստով այդ եղանակավորող բառերի հետ գրեթե նույնանում են այսպէս որ, նոյնպէս որ հարադրությունները, ինչպես՝ «Ասէր է դրոցս շինողն, թէ դալար զուֆան զուգծու այլ կու լինի, այսպէս որ կու ժողովեն զոչսրին ագոմիջին զբուրդն և զան ի պտուկ մի կու դնեն...» (Ա. Ամասիացի)։

Այսպէս և, նոյնպէս և, որպէս և հարադրությունները, եթե լրիվ իմաստով եղանակավորող բառ դարձած իսկ չլինեն, ապա իրենց նախաիմաստից հեռանալու ընթացքի մեջ են։ Որպես օրինակ կարելի է բերել այդ բառերի հետևյալ կիրառությունները. «Եւ իւր ստածումն այս է... և նոյնպէս ի յամենայն ցեղ տաք կերակրոց պատրաստ պահել, որ չվառի բնական տաքութիւնն» (Մ. Հերացի)։ «Անկաւ նա ի ծով մեղաց և մեռաւ նա յանգիտութիւն»։ Այսպէս և ամէն անգէտ, կորիցեն ի նոյն շարութիւն» (Յրիկ)։ «Երանի է աղքատաց, որպէս և Տէրն իսկ երանէ» (Կ. Երզնկացի)։

Բացի սրանցից, կան նաև մի շարք այլ հարադրություններ, առավելապես ստորադասական շաղկապներ, որոնք այլևայլ կիրառություններում որպես եղանակավորող բառեր են օգտագործվում. ինչպես՝ «Եւ այլ ամենայն ցեղ հիւանդութիւն որ ի հետն ջերմն լինի, յորժամ հիւանդութիւն բժշկի, և ջերմն արձակի։ Ապա թէ ոչ՝ նոյնպէս տես զջերմն թէ յորո՞յ ազգէ է...» (Մ. Հերացի)։ «Ապա աղէկ պիտի իմանալ, որ դրուստ ի վատ թրծելոյ լինի պատճառն և ոչ ի դիպելոյ կամ յայլ իրաց, թէ ոչ, զամանն միայն վճարէ» (Մ. Գունդստապլ)։ «Կ'ասեմ թէ հայերեն ասա, թէ չէ՝ ես ասեմ դուն լսէ» (Ն. Քուլակ)։ «Շահ չկայ աշխարհէս ով ոք դատեսցի, Բայց միայն թէ բարի գործոց հետեւի» (Մ. Ղրիմեցի)։ «...Աղեղն եղնենի լինի ու լարն ի վերայ դալենի, Քաշողն քաշորդի լինի, հապա թէ իմ սիրուն հասանի»։ «Ասա ու լսէ, իմ եար, ոնց որ (=կարծես թէ) չէ տարել քունն զիս» (Ն. Քուլակ)։

5) նկարագրական եղանակավորող բառեր.— նկարագրական եղանակավորող բառերի մեջ պետք է դնել նախ բայի խոնարհված ձևով և թէ, եթէ (թե) ստորադասական շաղկապով արտահայտվող կապակցությունները: Սրանք, անշուշտ, նախապես ստորոգյալ+ստորադաս նախադասության ստորադասական շաղկապի շարահյուսական միացություններ են եղել, սակայն հետագայում մի կողմից՝ բայաձևի՝ որպես գերադաս նախադասության ստորոգյալի, մյուս կողմից՝ շաղկապի՝ որպես ստորադաս նախադասության ստորադասական շաղկապի իմաստի թուլացման, մթազնման հետևանքով ստացվել է եղանակավորող բառ արտահայտող մի կապակցություն: Պետք է նկատել, որ ամենբայից չէ, որ նման եղանակավորող բառեր են առաջանում, այլ առավելապես այսպես կոչված վերացական բայերից, ամբողջ հայերենում օգտագործվում են ինչպես իրենց նյութական, այնպես էլ օժանդակ, վերացական բայի իմաստով: Այդ բայերից են՝ հաշվել (=թվել, նաև՝ համարել), կարծել (=կարծիք ունենալ, նաև՝ ենթադրել), լինել (=գոյություն ունենալ, նաև՝ դառնալ), ասել (=խոսել, բան հաղորդել, նաև՝ ենթադրել) և այլն:

Եվ իրոք, միջին հայերենում նման նկարագրական եղանակավորող բառերը նշված բայերից են կազմված, ինչպես՝ «...խոտ մըն է որ տերևն ի ջրկոտի մի տերև կու նմանի. եւ շատ ծակտիք ունի, ասես թէ ցեցն է ծակծկել» (Ա. Ամասիացի). «է՛ մարդ, որ փյալս բանէս Դու բաժին իսկի շունենաս. Հաշուենք թէ անասունն ես դու...» (Ֆրիկ). «Կարծեմ եթէ ծաղկունքն արին հետ ինձ քէն» (Գ. Աղթամարցի). «Դարձեր եմ մաղասկաթ և շունիմ դըրար, լինի թէ այգեգործն արար զայս ընդ փս» (Հ. Թլկուրանցի):

Նկատելի է, որ բայական կազմության մեջ եղանակավորող բառերն առավելապես երկբայական իմաստ ունեն: Մյուս կողմից՝ նման կազմություններում բայերը դրվում են սահմանական եղանակի ներկա և հրամայական եղակի ձևերով, ըստ որում առավելապես առաջին և երկրորդ դեմքերով, ինչպես՝ հաշուէ թէ, թող թէ, գրեթէ (հրամայական), կարծեմ թէ, ասես թէ (սահմանականի ներկա):

Նշված բոլոր ձևերից դուրս կան նաև բառակապակցություններ, որոնք խոսքի մեջ իրենց բաղադրիչների առանձին իմաստով ու շարահյուսական պաշտոնով հանդես չեն գալիս, այլ ավելի հարում են եղանակավորող բառերին: Մեր կարծիքով, այդպիսի նկարագրական եղանակավորող բառեր են որչափ ևս առաւել, ի վերայ այսք ամենայնի, արեւոյ համար, մասամբ և՛ աստուած կու սիրէք և նման կապակցությունները:

Որչափ ևս առաւել բառակապակցությունը գրաբարյան է. ինչպես որ Եղիշեի մոտ էլ գտնում ենք. «Իսկ եթէ առ մարմնաւորս այսպէս, որչափ ևս առաւել առ հոգեւորն»: Միջին հայերենի մեր օրինակն է՝ «...երբ զգրաւկնուն կամ զպոխտիմոնին վճարն հայնց ուժով կու տայ առնով նա, որչափ ևս առաւել զկորսնելոյն...» (Ս. Գունդատապլ):

Ի վերայ այսք ամենայնի նույնպես գրաբար հայտնի կազմություն է և կենդանի ու գործածական նույնիսկ աշխարհաբարում ու արդի հայերենում: Ահա և օրինակներ միջին հայերենից. «Եւ ի վերայ այսք ամենայնի կու հրամայէ օրէնքս, որ զինչ հեճկով և կամօք վասն շարութեան վնասէ նա, վճարէ յիւր քսակէն». «Բայց ի վերայ [այսք] ամենայնի խողի իսկի պատ չկայ» (Ս. Գունդատապլ):

Արեւոյ համար, անշուշտ, ժողովրդական լեզվամտածողության մի արտահայտություն է, ինչպես՝ «խօշ եար, արեւոյ համար, որբուկ եմ, զիս մի լացներ»:

(ն. Քուլակ)։ Աստուած կու սիրեմ կապակցությունը նույնպես, ինչպես այն ընկալվում է ներկա իմաստով, կարծում ենք, պետք է եղանակավորող բառ համարել։ ինչպես՝ «Լաւ մարդն այն է, ինչպես եկեալ է՝ էլ այնպէս գնայ։ Աստուած կու սիրէք, միշտ օրհնելն մարդ չի վեր կենայ» (Ն. Հովնաթան)։

Այսպես և աստուծոյ համար, աստուծոյ սիրոյն համար կապակցությունները. ինչպես՝ «...Եւ ասաց դէն առ այրն այն, թէ... աստուծոյ համար զիս աղատէ»։ «Եւ ասաց դէն՝ Աստուծոյ համար և աստուծոյ սիրոյն համար գնայ ի դուռն արգելէ մէկ պահ մի...» (Վ. Այդեկցի)։

Այսպիսով, հայերենի եղանակավորող բառերն իրոք պետք է առանձնացվեն որպես առանձին խոսքի մաս և այսուհետև, մնացած խոսքի մասերին հավասար, քննության նյութ դառնան մեր ժամանակակից լեզվի բոլոր դրսևորումներում։

МОДАЛЬНЫЕ СЛОВА СРЕДНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

С. М. АНТОСЯН

Р е з ю м е

В последние десятилетия армянская грамматическая мысль выделила еще одну часть речи—модальные слова. Естественно, интересно узнать, какой исторический путь прошли входящие в эту часть речи слова, как употреблялись в языке. Выясняется, что в средний период в нашем языке также употреблялось большое количество слов (*ամ, գէմ, նա(նէ), խո, լոկ, հալա, դէյի* и т. п.), которые не отождествляются ни с наречиями, ни с междометиями, ни с другими неизменяемыми частями речи, а выражают отношение говорящего к высказываемой мысли, тем самым модализируя и нюансируя предложение.

Многие модальные слова перешли в среднеармянский язык из грабара, однако, среднеармянский, в свою очередь, имеет модальные слова, не известные гробару, которые и по сей день сохранились как живые формы восточноармянского и западноармянского литературных языков и народных говоров.